Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25 դեկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Հայկ Գրիգորյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/7460/05/22 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Մ.Գ. և Ս.Մ. 2022 թվականի նոյեմբերի 22-ին հայցադիմում են ներկայացրել (փոստին են հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսի նոտար Տ.Ս. և ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածքի կադաստրի բաժնի պետ Գ.Ա.՝ հետևյալ պահանջների մասին. *«(…) Արողջությամբ վերացնել միջամտող վարչական ակտը, այն է՝ [Լ.Պ.] տրամադրվող ժառանգության իրավունքի № 463 վկայականը որը տրվել է՝ 17.04.2013թ. քաղ. Վարդենիսի տարածքի նոտար [Տ.Ս.] կողմից:*

(…) Արողջությամբ վերացվի նաև զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները այն է՝ կեղծ ժառանգության իրավունքի վկայականի հիման վրա վերացվի

նաև Լ.Պ. անվամբ քաղ. Վարդենիսի փարածքի [կադաստր] [Գ.Ա.] կողմից տրված սեփականության իրավունքի կեղծ վկայականը, 05-023-0047-005 գրանցումը (…)»[1]:

2. ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ նաև Վարչական դատարան)՝ 2024 թվականի հունիսի 28-ի որոշմամբ գործի վարույթը կարճվել է:

3. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Մ.Գ. և Ս.Մ. վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 28-ի որոշումն ամբողջությամբ բեկանվել է, և թիվ ՎԴ/7460/05/22 վարչական գործն ուղարկվել է նույն դատարան՝ որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

4. Վարչական դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ վարչական գործը վերահասցեագրվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան):

5. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

6. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին:

<u>Ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները.</u>

7. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ս]ույն գործի փաստերից հետևում է, որ Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքից ելնելով, ինչպես վարույթի ընդունելիության փուլում, այնպես էլ գործի քննության ընթացքում հայցվորներին մատնանշել է ներկայացված հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով (ուժը կորցրել է 01.01.2025 թվականից) սահմանված նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում նախատեսված պահանջներին համապատասխանելու*

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 1-ին, թերթեր 126-127:

անհրաժեշտության մասին, սակայն հայցվորները, հայցապահանջի փոփոխությանն ուղղված միջոցներ չձեռնարկելով, ըստ էության պնդել են ներկայացված վիճարկման պահանջը՝ դրանով իսկ սահմանափակելով Դատարանին այդ պահանջի շրջանակում լուծելու գործի հետագա ճակատագիրը:

(…)

Վերոգրյալի համատեքստում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ նախ՝ սույն վիճելի իրավահարաբերություններում նուրարը թեև ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս իրականացնում է հանրային գործառույթ, սակայն վերջինս չի հանդիսանում գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, այսինքն՝ գործառութային առումով վարչական մարմին չէ, և երկրորդ՝ վիճարկվող վկայագիրը չի հանդիսանում վարչական ակտ, այն տրվել է ոչ թե հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ հարցի կարգավորման նպատակով, այլ մասնավոր իրավունքի շրջանակում, այն է՝ քաղաքացիաիրավական (ժառանգական) իրավահարաբերությունների կարգավորման համար, ուստի նման վկայագրի վիճարկմամբ հայցվորները հետապնդում են հենց իրենց քաղաքացիական իրավունքների պաշտպանություն:

(…)

Վերաքննիչ դատարանը, ամբողջությամբ համաձայնվելով բողոքարկվող դատական ակտում նշված պատճառաբանությունների հետ, արձանագրում է, որ այդպիսի պատճառաբանությունների արդյունքում ոչ թե պետք է սույն գործի վարույթը կարճվեր, այլ Դատարանը պարտավոր էր ՀՀ վարչական դատավարության օրե[ն]սգրքի 81-րդ հոդվածի ուժով հայցվորների հայցադիմումը վերահասցեագրեր ըստ ընդդատության, ինչն էլ հաշվի չի առնվել նրա կողմից»:

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին, 21-րդ հոդվածին և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14

վարչական գործով որոշմանը, թիվ ԵԱՔԴ/1369/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմանը՝ Վարչական դատարանը 2025 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ ժառանգության իրավունքի վկայագրի վիճարկմամբ հայցվորները հետապնդում են հենց իրենց քաղաքացիական իրավունքների պաշտպանություն, ուստի՝ սույն գործով վեճը ծագել են մասնավոր՝ քաղաքացիաիրավական (ժառանգական) իրավահարաբերություններ»*[2]:

9. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Pandjikidze and others v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճռին (գանգատ թիվ 30323/02, 104-րդ կետ), *Jorgic v. Germany* գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճռին (գանգատ թիվ 74613/01, 64-րդ կետ), *Richert v. Poland* գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճռին (գանգատ թիվ 54809/07, 41-րդ կետ), *Posokhov v. Russia* գործով 2003 թվականի մարտի 4-ի վճռին (գանգատ թիվ 63486/00, 39-րդ կետ), *Yegorychev v. Russia* գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճռին (գանգատ թիվ 8026/04, 64-րդ կետ), *Lavents v. Latvia* գործով 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճռին (գանգատ թիվ 58442/00, 81-րդ կետ), ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին, 5-րդ հոդվածին, 11-րդ հոդվածի 2-րդ մասին, 66-րդ հոդվածին, 220-րդ հոդվածին, 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին, 199-200-րդ հոդվածներին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 2021 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմանը, թիվ ԼԴ/2540/02/14 քաղաքացիական գործով 2017 թվականի հուլիսի 20-ի որոշմանը, թիվ ՎԴ/4901/05/11 վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 4-րդ, թերթեր 101-109:

որոշմանը, թիվ ԱՐԴ1/0019/02/13 քաղաքացիական գործով 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմանը, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) [Հ]այցապահանջի հիմքը՝ նոտարի կողմից առերևույթ թույլ տրված «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի ենթադրյալ խախտման հիմքով նոտարական գործողությունների վիճարկումն է, այլ ոչ թե ժառանգությունն ընդունելու կապակցությամբ մի կողմից [Մ.Գ. և Ս.Մ.] և մյուս կողմից Լ.Պ. միջև ծագած ժառանգման իրավահարաբերությունները:*

Նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու գործողության վիճարկման կապակցությամբ տվյալ նոտարի և սույն գործով հայցվորների միջև ծագած վեճի բովանդակությունը հանգում է նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու՝ որպես հանրային գործառույթի իրականացման իրավաչափության կամ ոչ իրավաչափության հարցին և տվյալ դեպքում՝ դատական քննության առարկա է հանդիսանում նոտարի կողմից իր հանրային գործառույթի իրականացման իրավաչափության ստուգումը: Ընդ որում, Վարդենիսի նոտարական տարածքի նոտարի հանրային գործառույթի իրականացման իրավաչափությունը ենթակա է ստուգման նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու վերաբերյալ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավակարգավորումները խախտված լինելու կամ չլինելու հարցը պարզելու միջոցով:

Ժառանգության իրավունքի վկայագիրն ամբողջությամբ վերացնելու վերաբերյալ սույն գործով ներկայացված հայցապահանջի հիմքում ընկած իրավական վեճն անմիջականորեն չի բխում ժառանգման իրավահարաբերություններից. այն չի կարող համարվել ժառանգությունն ընդունելու, ժառանգության բացման վայրի, ժառանգության զանգվածի կամ ժառանգման ինստիտուտի այլ տարրերի կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճ: Այլ կերպ ասած՝ քննարկվող հայցապահանջը բխում է ոչ թե քաղաքացիաիրավական (ժառանգման) հարաբերություններում ժառանգների միջև ծագած վեճից, այլ նոտարի կողմից «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականության ենթադրաբար ոչ

պատշաճ կատարման արդյունքում մի կողմից այդ նոտարի և մյուս կողմից Հայցվորների միջև ծագած հանրային-իրավական վեճից:

Այսպիսով, Դատարանի գնահատմամբ սույն գործով [Մ.Գ. և Ս.Մ.] կողմից ներկայացված՝ 17.04.2013 թվականին Վարդենիսի տարածքի նոտար [S.U.] կողմից [Լ.Պ.] տրամադրված ժառանգության իրավունքի N 463 վկայականը որպես միջամտող վարչական ակտ ամբողջությամբ վերացնելու հայցապահանջը ծագում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից բխող վեճից»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

10. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ սույն գործի ենթակայության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում, իրավաչափ է արդյո՞ք Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՎԴ/7460/05/22 գործի ենթակայությունը լուծելու համար այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելը:*

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (…)»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար»:*

---

[3] Տե՛ս դատական գործը, հատոր 4-րդ, թերթեր 114-118:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

12. Օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի պարտադիրության սկզբունքի արդյունավետ իրացումն իրավունքի գերակայության ցուցիչներից է և արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչը[4]:

---

[4] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի, երրորդ անձ՝ «Վայկ Մետալ» ՍՊԸ գործով*, 2022 թվականի նոյեմբերի 04-ի թիվ ՎԴ3/0037/05/18 որոշումը:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», ի թիվս այլնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է *res judicata* սկզբունքը: Այս սկզբունքի պահանջն է, ի թիվս այլնի, վերջնական դատական ակտերի կատարման ապահովումը: Դատական ակտը չկատարելու արդյունքում իմաստազրկվում է դատական պաշտպանության իրավունքը և իրավունքի գերակայությունը[5]:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին զեկույցի» (ընդունված 2011 թվականին մարտի 25-26) (CDL-AD(2011)003rev) 46-րդ կետի համաձայն՝ իրավական որոշակիությունը պահանջում է հարգել *res judicata* սկզբունքը, ըստ որի՝ ի թիվս այլնի, ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն:

Վճռաբեկ դատարանը, *Մելիք Մեսրոպյանի* վերաբերյալ որոշմամբ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ որպես իրավունքի գերակայության ապահովման կարևորագույն երաշխիքի, արձանագրել է հետևյալը. *«Դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վերջնական դառնալու, և միայն բացառիկ դեպքերում դրա վերանայման հնարավորության, այսինքն՝ դատական ակտերի կայունության սկզբունքի հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, ինչը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի[6]:*

Իրավական որոշակիությունը ենթադրում է հարգանք res judicata՝ դատական ակտերի կայունության սկզբունքի նկատմամբ:

(…)

---

[5] Տե՛ս, «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», 107-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

Իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացվել միայն պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում[7] կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ[8]:

(…)

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային բաղադրատարրերից մեկը դատական ակտերի կայունության կամ res judicata սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության ոտնահարման և ուղղակիորեն ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: Res judicata սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության ու վերջնական լինելու, դրանց համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև դատարանների հեղինակությունը և վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացված համարվել միայն օրենքով հստակ սահմանված, պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում: Նշվածը նաև բխում է Սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-754 որոշման շրջանակներում ընդգծված՝ միջազգային իրավունքում հայտնի սկզբունքից՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), որն ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը՝ որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի»[9]:

---

[7] Տե՛ս, *mutatis mutandis,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Brumarescu v. Romania* գործով 2001 թվականի հունվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 28342/95 , կետեր 61-62, *Ryabykh v. Russia* գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 52854/99, կետեր 51-52:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մելիք Մեսրոպյանի* վերաբերյալ գործով 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԵԷԴ/0040/01/12 որոշումը:

12.1. Մեկ այլ որոշմամբ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ. *«[Ի]րավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը»*[10]:

12.2. Վճռաբեկ դատարանը, *Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների* քաղաքացիական գործով կայացրած որոշման շրջանակներում անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին, արձանագրել է հետևյալը. *«[Ա]ռդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:*

Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն inter alia պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետ 61), միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում»[11]:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Մ.Գ. և Ս.Մ. 2022 թվականի նոյեմբերի 22-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսի նոտար

[10] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անժելա և Նունե Հարությունյաններն ընդդեմ Բեգլար Մկրտումյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 որոշումը

[11] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների* գործով 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ ԱՐԴ/0062/02/09 որոշումը:

Տ.Ս., ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսի կադաստրի բաժնի պետ Գ.Ա.՝ հետևյալ պահանջների մասին. *«(…) Աբողջությամբ վերացնել միջամտող վարչական ակտը, այն է՝ Լ.Պ. տրամադրվող ժառանգության իրավունքի № 463 վկայականը որը տրվել է 17.04.2013թ. քաղ. Վարդենիսի տարածքի նոտար [Տ.Ս.] կողմից:*

(…) Աբողջությամբ վերացվի նաև զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները այն է՝ կեղծ ժառանգության իրավունքի վկայականի հիման վրա վերացվի նաև [Լ.Պ.] անվամբ քաղ. Վարդենիսի տարածքի [կադաստր] [Գ.Ա.] կողմից տրված սեփականության իրավունքի կեղծ վկայականը, 05-023-0047-005 գրանցումը (…)»[12],

- Վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 28-ի որոշմամբ գործի վարույթը կարճվել է[13],

- Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Մ.Գ. և Ս.Մ. ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ամբողջությամբ բեկանվել է Վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 28-ի որոշումը, և թիվ ՎԴ/7460/05/22 վարչական գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վեճը ենթակա չէ քննության Վարչական դատարանում և գործը պետք է ուղարկել ստորադաս դատարան՝ գործն ըստ ենթակայության քաղաքացիական գործ քննող ՀՀ ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու վերաբերյալ հարցը լուծելու նպատակով[14],

- Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշումը չի բողոքարկվել և օրինական ուժ է ստացել,

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ենթակայությունը որոշելու նպատակով[15]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով առկա է Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ի օրինական ուժի մեջ

---

[12] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[13] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[14] Տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը:
[15] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

մտած որոշում, որտեղ անդրադառնալով խնդրո առարկա՝ գործի ենթակայության հարցին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ այն ենթակա չէ քննության վարչական դատարանում: Արդյունքում բեկանելով Վարչական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 28-ի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության՝ գործն ըստ ենթակայության քաղաքացիական գործ քննող ՀՀ ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու վերաբերյալ հարցը լուծելու նպատակով: Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի բողոքարկվել և օրինական ուժ է ստացել:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արդեն իսկ քննարկման առարկա է դարձել և լուծվել սույն գործի ենթակայության հարցը, որի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված՝ գործերի ենթակայության (ընդդատության) վերաբերյալ վեճերի լուծման գործիքակազմը գործադրվել չէր կարող:

Հետևաբար, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ սույն գործի ենթակայության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՎԴ/7460/05/22 գործի ենթակայությունը լուծելու համար այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ Մ.Գ. և Ս.Մ. հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/7460/05/22 գործը պետք է վերադարձնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/7460/05/22 գործն ըստ հայցի Մ.Գ. և Ս.Մ. ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսի նոտար Տ.Ս., ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսի կադաստրի բաժնի պետ Գ.Ա.՝ հետևյալ պահանջների մասին. *«(…) Ամբողջությամբ վերացնել միջամտող վարչական ակտը, այն է [Լ.Պ.] տրամադրվող ժառանգության*

իրավունքի № 463 վկայականը որը տրվել է 17.04.2013թ. քաղ. Վարդենիսի տարածքի նոտար [S.U.] կողմից:

(…) Ամբողջությամբ վերացվի նաև զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները այն է կեղծ ժառանգության իրավունքի վկայականի հիման վրա վերացվի նաև [Լ.Պ.] անվամբ քաղ. Վարդենիսի տարածքի [կադաստր] [Գ.Ա.] կողմից տրված սեփականության իրավունքի կեղծ վկայականը, 05-023-0047-005 գրանցումը (…)» վերադարձնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ	